ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4786-2020 գրությամբ «Աբի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1037-2020 գրության հիման վրա, 31.03.2020թ. թիվ 26/26-1/4786-2020 գրությամբ նախաձեռնել է «Աբի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱԲԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱԲԻ» ՍՊԸ-ն 13.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Աբի» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Աբի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում արձանագել է անհամապատասխանություններ, և գնահատող հանձնաժողովի քարտուղարը 18.03.2020թ. Ընկերությանը ծանուցել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ՝ մասնավորապես նշելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով ընթացակարգին Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և պարզվել, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Ընկերության կողմից հայտով ներկայացվել է հավելված 1.1-ը (ապրանքի ամբողջական նկարագիր), որտեղ 24-րդ չափաբաժնի մասով L-ի չափսերը նշված չեն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը էլեկտրոնային եղանակով ուղարկել v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Ընկերությունը հայտնել է, որ սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, սակայն 26.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով արձանագրվել է, որ «Աբի» ՍՊԸ-ն 24-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է ամբողջական նկարագիրը, որը սակայն գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, և նույն կետով էլ որոշվել է «Աբի» ՍՊԸ-ի հայտը 24-րդ չափաբաժնի մասով մերժել:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերն և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության

հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) Հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ

կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը հայտնել է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով «Աբի» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցմամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով ընթացակարգին Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Ընկերության կողմից հայտով ներկայացվել է հավելված 1.1-ը (ապրանքի ամբողջական նկարագիր), որտեղ 24-րդ չափաբաժնի մասով L-ի չափսերը նշված չեն:

Ընկերությունը նշել է, որ հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը էլեկտրոնային եղանակով ուղարկել v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Ընկերությունը հայտնել է, որ սահմանված ժամկետում և կարգով շտկել է անհամապատասխանությունը, այն է՝ հավելված 1.1՝ ապրանքի ամբողջական նկարագրում 24-րդ չափաբաժնի մասով նշել է L-ի չափսերը, և որ վերը նշված հանգամանքը փաստվում է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ և 23.03.2020թ. ծանուցմամբ:

Մինչդեռ Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից

հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ավելին՝ Կարգի 46-րդ կետը հստակ պահանջում է, որպեսզի տեխնիկական բնութագրում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ վերոնշված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից այդպես էլ անհասկանալի է մնում, թե գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել, քանի որ դրանք մանրամասն չեն արձանագրվել: «Աբի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն անկանխատեսելի կերպով մերժվել է «Աբի» ՍՊԸ-ի հայտը՝ այդպես էլ չմանրամասնելով, թե ինչու է հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով մերժվել ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը հայտնել է, որ վերոհիշյալի արդյունքում ակնհայտորեն խախտվել են իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները):

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությունը, որով ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայացրել էր «ԱԲԻ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, արդեն իսկ մանրամասն ներկայացրել է, թե ինչ անհամապատասխանություն է արձանագրվել և ինչու է մերժվել ՍՊԸ-ի հայտը, մասնավորապես՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) գնահատման ընթացքում պարզվել է, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում՝ հավելված 1.1-ում (ապրանքի ամբողջական նկարագիր), 24-րդ չափաբաժնի մասով (մոմերի բանալի) առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ L-ի չափսերը նշված չեն, քանի որ Ընթացակարգի հրավերով L-ի չափսերը սահմանված են եղել 195 մմ, ուստի Ընկերությունից պահանջվել է շտկում, սահմանված ժամկետում Ընկերությունը ներակացրել է նոր (շտկված) տարբերակը, որտեղ L-ի չափսեր նշվել են 260մմ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետը գնահատող հանձնաժողովը մերժել է «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը՝ 24-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը նշել է, որ հայտը մերժելու հիմքը ի հայտ է եկել միայն «ԱԲԻ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով կազմակերպված ընթացակարգի շրջանակներում, միևնույն ժամանակ խնդրել է Բողոքներ քննող անձին նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր» 24-րդ չափաբաժնի համար միաժամանակ սահմանվել է՝

24	Մոմերի բանալի 21	L=195 մմ	ТУ 3926-036-53581936-2013

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված ТУ 3926-036-53581936-2013 համապատասխանում է L=260 մմ չափսը, որն էլ «ԱԲԻ» ՍՊԸ-ն ներկայացրել է,

L=195 մմ չափսը նախատեսվում է ТУ 3926-036-53581936-2005 տեխնիկական պահանջով՝ համաձայն կից ներկայացվող հիմքերի:

Ընկերությունը հայտնել է, որ արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցրել է «Աբի» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «Աբի» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/68 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1037-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման ընթացքում պարզվել է, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում՝ հավելված 1.1-ում (ապրանքի ամբողջական նկարագիր), 24-րդ չափաբաժնի մասով (մոմերի բանալի) առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ L-ի չափսերը նշված չեն, քանի որ Ընթացակարգի հրավերով L-ի չափսերը սահմանված են եղել 195մմ, ուստի Ընկերությունից պահանջվել է շտկում, սահմանված ժամկետում Ընկերությունը ներկացրել է նոր (շտկված) տարբերակը, որտեղ L-ի չափսերը նշվել են 260մմ:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը՝ 24-րդ չափաբաժնի մասով:

Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/68 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աբի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4786-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1037-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Աբի» ՍՊԸ-ի 13.04.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում***

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի

«դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աբի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում, հայտնաբերվել է անհամապատասխանություն՝ մասնավորապես՝ 24-րդ չափաբաժնի մասով L-ի չափը նշված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ Ընկերության կողմից ներկայացվել է հավելված 1.1-ը, որտեղ 24-րդ չափաբաժնի մասով L-ի չափը նշված չէ, և շտկված տարբերակը էլեկտրոնային եղանակով ուղարկելու v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Աբի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, որի հիման վրա, Կարգի 42-րդ կետի համաձայն, մերժվել է վերջինիս հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը սույն ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 24-րդ չափաբաժնի համար սահմանվել է ТУ 3926-036-53581936-2013, ուստի և Ընկերության կողմից շտկումից հետո ներկայացվել է ТУ 3926-036-53581936-2013 նախատեսվող 260մմ չափը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Ուսումնասիրելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 24-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելուց հետո, սահմանված ժամկետում ներկայացրել է 24-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, որտեղ արդեն իսկ նշել է հրավերով պահանջվող ապրանքի Լ-ի չափը, սակայն առաջարկվող ապրանքի՝ մոմերի բանալի 21 ապրանքի Լ-ի չափը նշել է 260 մմ, մինչդեռ Ընթացակարգի հրավերով Լ-ի չափը սահմանվել է 195 մմ, այսինքն՝ Ընկերության կողմից ներկայացվել է հրավերով սահմանված չափսից տարբերվող չափս:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից գրությամբ վկայակոչված այն դիտարկմանը, որ տեխնիկական բնութագրի 24-րդ չափաբաժնի համար սահմանվել է ТУ 3926-036-53581936-2013, ուստի և Ընկերության կողմից շտկումից հետո ներկայացվել է ТУ 3926-036-53581936-2013-ով նախատեսվող 260մմ չափը, սույն մասով հարկ եմ համարում նշել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել է Ընկերության կողմից տրամադրված «КЗСМИ» գործարանի կայքի համապատասխան էջի արտատպումը, ինչպես նաև «КЗСМИ» գործարանի պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունը՝ մոմերի բանալի 21 ապրանքի չափսերի մասով, որի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ТУ 3926-036-53581936-2013 տեխնիկական պայմանին համապատասխան մոմերի բանալի 21 ապրանքի ***Լ-ի չափսերը կարող են***

լինել տարբեր, օրինակ՝ 100 մմ, 130 մմ, 150 մմ, ***195 մմ***, 230 մմ, ***260 մմ***: Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերության դիտարկումն այն մասով, որ Ընթացակարգի հրավերով սահմանված ТУ 3926-036-53581936-2013 տեխնիկական պայմանին համապատասխանում է միայն L-ի 260 մմ չափսը և որ L=195 մմ սահմանելու դեպքում անհրաժեշտ էր հրավերով նախատեսել ТУ 3926-036-53581936-2005 տեխնիկական պայմանը, չի համապատասխանում իրականությանը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ այդպես էլ անհասկանալի է մնում, թե գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել և, ընդհանրապես (դրանք մանրամասն չեն արձանագրվել), քանի որ «Աբի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն անկանխատեսելի կերպով մերժվել է «Աբի» ՍՊԸ-ի հայտը, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ նման դիտարկումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընթացակարգի քարտուղարի կողմից 18.03.2020թ. Կարգի 41-րդ կետի համաձայն Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ հստակ նշվել է, որ Ընկերության կողմից 24-րդ չափաբաժնի մասով ներկայացված հավելված 1.1-ում՝ ապրանքի ամբողջական նկարագրում, չի նշվել հրավերով պահանջվող L-ի չափսը:

Ընդ որում՝ հարկ եմ համարում նշել, որ Ընկերությունը ծանուցվելուց հետո, սահմանված ժամկետում ներկայացրել է 24-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, որտեղ արդեն իսկ նշել է հրավերով պահանջվող ապրանքի L-ի չափսը, սակայն առաջարկվող ապրանքի՝ մոմերի բանալի 21 ապրանքի L-ի չափսը նշել է 260 մմ, մինչդեռ հրավերով L-ի չափսը սահմանվել է 195 մմ, ինչը և հիմք ընդունելով՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Աբի» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4786-2020 գրությամբ «Աբի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Աբի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**